համար մեծ նշանակութիւն ունի ապագայ ուսման համար։

Խօսենք ընդարձակօրէն վերոյիշեալ առարկաների ամէն մինի վերայ։

1) **Մայրենի լեզուի ուսումնասիրութիւնը** տալիս է ամենահարկաւոր նիւթ երեխայի զարգացման համար։ Ի հարկէ սորա համար հարկաւոր է յարմար ընթերցանութեան գիրք, որ առաջնորդէր երեխային աստիճանաբար անցնել կերպով պարզից դէպի բարդը, հեշտից դէպի դժուարը, և կարողանար տալ ուսուցչին բաւական լաւ նիւթ իր խօսակցութիւնների և բացատրութիւնների համար։

Նկատողութիւն. Ցաւում ենք, որ Ուշինսկու գեղեցիկ ձեռնարկ „Родное слово“ 2 մաս, որոնցից առաջին մասը արդէն թարգմանուած տպուել է *) երկրորդը պատրաստ է տպագրութեան, չենք կարող ուղղակի ձեռնարկ առաջարկել, մանաւանդ սկզբում։ Այդ գիրքը, ունենալով ուսուցիչների համար մեծ պէդագօգիքական նշանակութիւն, մեղանչում է բոլորովին այդ իրան յատկութիւնը այն պատճառով, որ աշակերտները սկզբում ոչ մի նկատողական զարգացում չեն ստանում։ Այդ գիրքը մինչև աշակերտները նկատողական եղանակով չեն սովորել գրել կարդալ, չ'պէտք է գործածուի իբրև դասագիրք։ Փորձված ուսուցչից է խօսուած, թէ ինչպէս պէտք է գործը այնպէս առաջ տանի, որ նկատողական ուսումը իրան ճանապարհից չի շեղուի, որովհետև եթէ սկզբում սովոր վերացական անմիտ բառերի ուսանելը, այնուհետև շատ դըժուարութիւնների պէտք է հանդիպի ուսուցիչը, մինչև որ աշակերտը ուղղվի, որովհետև աշակերտը կարդում է նորա համար, որ հասկանայ և ոչ թէ լոկ բառեր սովորի։ Կարդալ գրել սովորելուց յետոյ, մեր բոլոր դասագրքերի մէջ երեխաների համար, այդ գիրքը կարող է լինել գեղեցիկ ձեռնարկ, եթէ միայն ուսուցիչը հետևի լոկ և լոկ Ուշինսկուն և զգոյշ ընտրութիւն անէ կարդալու նիւթերու մէջ, աշակերտների հասկացողութեանը յարմարվելով։

Նկատողութիւն. 2. Ինչ որ կը վերաբերի պ. Տէր-Ցախվեանցի „Մայրենի լեզու“ գրքին, մենք բոլորովին վնասակար ենք համարում իբրև ձեռնարկ երեխաների համար այդ գիրքը. և ոչ մի զարգացողական նիւթ, ինչպէս մենք նայում ենք այդ գործին, այդ գրքի մէջ չ'ենք գտնում։ Որևիցէ այդ դասագիրքը ցանկալի կը լինէր եթէ դուրս հանվէր մեր ուսումնարաններից. որովհետև այդ գիրքը քիչով է զանազանվում մեր հին տետրից, որի վերայ մենք ամէնքս մաշուել ենք։ Պ. Տէր—Ցախվեանցը Ուշինսկու գրքի վերնագիրը (Родное слово—Մայրենի լեզու) իրան գրքի վերայ առնելով՝ միթէ չէր մտածում, որ մեծ հայերս և ինքը պ. Տէր—Ցախվեանցը մերհականութեան պաշտպաններ ենք։

Կարդալ-գրելը (ա. բ...) պէտք է ուսուցանվի հնչիւնական մեթոդայով. Այս մեթոդայով երեխաները 2—3 ամսում սկսում են արդէն բաւական լաւ կարդալ և գրելից արտագրել։ Եթէ տարրական ուսումնարանի ընթացքը լինի 2 տարվայ, այն ժամանակ երեխաները պէտք է կարողանան կարդալ բոլորովին անսխալ, արագ և հասկացողութեամբ։ Նոքա պէտք է կարողանան կարդացածը յետ պատմել, պէտք է կարողանան նմանապէս նորանց առաջարկած նախադասութիւններին գրաւոր համառօտ պատասխաններ տալ, միայն կատարեալ նախադասութիւններով։

Ուղղագրութեան համար պէտք է շաբաթը երկու երեք անգամ գրել տալ թելադրութիւնով։

2) **Հաշիւ.** Գրուբէի մեթոդայով *) քարերի, խորանարդների etc միջնորդութիւններով։

Հարկաւոր է հաշուել տալ և համարիչի վերայ։

3) **Նկատողական—գիտողական ուսումը։** Նկատողական կրթութեան վերայ ընդհանրապէս մինչև հիմայ մեզանում ուշադրութիւն չեն դարձրել։ Այդ դաստիարակութիւնը մեզանում մինչև հիմայ ոչ թէ չեն մտցրել, այլև մինչև անգամ գրականութեան մէջ չեն զարթեցրել դրա հարցը։ Այդ մեզ համար բոլորովին նոր և անյայտ բան է, չ'նայելով որ այդ ուսումը պէտք է լինի ամէն ուսման հիմքը։ Այդ բանը շատ լաւ են հասկացել գերմանական երևելի պէտագոգները, Պեստալոցցին, Դիստերվէգը և նորանց հետևողներից ռուսաց պեդագոգ Ուշինսկին։ Այն օրից, երբ մանաւանդ Դիստերվէգը մտցրեց այդ ուսումը գերմանական ուսումնարանների մէջ, այն օրից վերջապէս սկզբնական կրթութիւնը ստացաւ իրան կատարեալ ուղղութիւնը և հասաւ այն աստիճանին, որին նա պէտք է հասնէր։ Այն օրից տարրական ուսումնարանները սկսեցին աստիճանաբար ազատուել չոր ու ցամաք սխոլաստիքական և կղերիքական ուղղութիւնից։ Հիմայ բոլոր գերմանական ուսումնարաններում թագաւորել է այդ փորձումը։

Նկատողական ուսումը Մայրենի լեզուի հետ երեխաների զարգացման գլխաւոր միջոցն է։ Ընդունակ ուսուցիչը նրա մէջ կը գտնէ անսպառելի նիւթ. նա կարող է ձեռք տալ բնական գիտութեանը,—կենդանիները, տունկերը և հանքերը քննելով, ֆիզիկական—բնութեան զանազան երևոյթները քննելով, պատմութիւնը և աշխարհագրութիւնը (հայրենագիտութիւն), ուսումնասիրելով իրան հայրենիքը, քաղաքը և այլն։ Բացի սորանից նաև գիտողական ուսումը զարգացնում է երեխաներին ուղիղ դատելու և իրենց միտքը պարզ կերպով արտայայտելու։

4) **Նկարչութիւնը և գծագրութիւնը** քառակուսի խազերի միջոցով ուսանելով, ձեռնտու են փոքրիկ երեխաներին ձևակերպել կենդանիներից վեր առած առարկաներ և զանազան երկրաչափական ձևեր։ Թէ որքան օգտաւէտ է գործնական և ճաշակագիտական հայեացքով նկարագրել իմանալ, էլ խօսել հարկաւոր չէ։

Ահա համառօտապէս այն պարապմունքները, որ պէտք է տան երեխաներին տարրական ուսումնարաններում։ Մնում է ասել մի քանի խօսք ևս դասական կազմակերպութեան և դասախօսութեան եղանակի վերայ։

(Կը շարունակվի)

---

*) Մայրենի լեզու, առաջին մասը աշխատասիրութիւն Ն. Տէր Ղևոնդեանցի.

*) Գրուբէի մեթոդան այնքան յայտնի է, որ աւելորդ ենք համարում երկարաբանութիւն անելը.

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

Ես իմ նամակների մէջ միայն տեղագրական և առևտրական ընդհանուր նկարագիրը հաղորդեցի Ձեզ ի բաց թողնելով ժողովրդի առ հասարակ վարքը ու բարքը, մտաւորական դրութիւնը. այդ պակասը լրացնելու համար համառօտապէս պիտի խօսեմ այստեղ առաջ Թուրքերի վերայ որոնք բընակիչների մեծ մասն են կազմում, և յետոյ հայերի վերայ.

Թուրքերը երկու կրօնական ցեղից են—Սիւննի և Շիա կամ Ջաֆրիկ և Պարսիկ. այդ երկուսի մէջ տարբերութիւնը քիչ չէ և թէ կրօնական համոզմունքով և արարողութիւնով ջոկվում են միմեանցից. Թողնելով խնդիրը թէ ինչումն է կայանում այդ երկու ազգերի կրօնքի հիմքը և իրարից տարբերութիւնը, ես միայն սա եմ կարևոր համարում ասել, որ Սիւննիի կրօնական համոզմունքը որքան էլ աղէտ և մոլեռանդ լինէր. այնուամենայնիւ քիչէն շատ աւելի ներողամիտ է դէպի օտար ազգութիւնները. Ջաֆրիկը չի խորշում քրիստոնէի հետ նստել վերկենալու, թէյ խմելու և հաց ուտելու (բացի խմիչք և խոզի միս գործածելուց). իսկ պարսիկը խորշելով այդ բոլորից սրբապղծութիւն է համարում քրիստոնէի հետ նստել վեր կենալը անգամ. թէև այդպիսի խստութիւն ճըշտութիւնով չեն կարողանում պահել այստեղ, որովհետև հայերի հետ յարաբերութիւններ ունենալու ստիպուած են և ակամայ յանձն են առնում, բայց ով որ եղած է պարսկաստանի քաղաքներում, տեսած է անչափ պարսիկների այդ տմարդի ծիսապաշտութիւնը.

Այդ երկու ազգութիւնները միմեանց հետ միշտ կրօնական թշնամութիւններ ունին և այդ թշնամութիւնները աւելի սոսկալի կերպարանք են ստանում պարսիկների այն զզուելի ծիսակատարութեան ժամանակ, որը Մուհարրէմի տօնի օրեր է կոչվում. Այդ բարբարոս արարողութիւնը ցոյց է տալիս դոցա կրօնքի խաւար և վերջին աստիճանի ֆանատիկ լինելը. Այդ օրերին քիչ է պատահել որ մէկմէկու վրայ են յարձակուել և այս պատճառաւ քաղաքական իշխանութիւնը զօրեղ միջոցներ է գործ դնում այդ հանդէսի ժամանակ խաղաղութիւն չխռովելու համար.

Դոքա ունին իրենց համար մզկիթ առանձին, և մզկիթի կողքին ցած, սև պատերով մի երկու սենեակ կան շինած, այդ է նոցա ուսումնարանը, եթէ այդ անունը կարելի է տալ. Այստեղ սովորեցնում է մօլլան ծոցը ձեռքին աղաղակների և վիվլուկների մէջ խալաժական մատաղ սերնդին զարհուր ֆանատիկական և աւելորդապաշտական գաղափարներով. . . .

Աւելորդ է ասել, որ Թուրքերի կանայք, ենթարկուած լինելով փակուած կեանքին, մնացած են ստրուկ և խաւար ինչպէս իրենց մարդիկը.

Գանք հայերին.

Թուրքերը խանութեան ժամանակ եղած են ներգործող այդ թէ հայի բնաւորութեան և կեանքի վերայ. այդ բանը, ինչպէս և ուրիշ տեղերում յայտնի երևում է և այստեղ. Հայը չի շարժվում հասարակական կեանքով, նա իր բնածինքից դուրս էլ ոչինչ չի նկատում, նա ապրում է միայն իրեն համար—այդ է մեր հայերի ընդհանուր ախտը, այդ է մեր դժբաղդ դատակնիքը.

Բարեբաղդաբար կայ Նուխուայ մէջ մի հոգևոր հայոց ուսումնարան, այստեղ միայն սովորեցնում են հայերէն և ռուսերէն լեզու, կրօնագիտութիւն և վայելչագրութիւն և փոքր ինչ թուաբանութիւն, կայ նոյնպէս տէրութեան ծախքով հիմնած մի գաւառական ուսումնարան և սովորեցնում են այստեղ Ռուսերէն, Հայերէն և Թուրքերէն և մի քանի առարկաներ թուաբանութեան աշխարհագրութիւն. Սակայն պէտք է ասել որ այդ ուսումնարանները չեն կարող յառաջացնել մի բան և չեն կարող յառաջադիմել, որովհետև ժողովուրդը առհասարակ անհոգ է մտաւորական զարգացման վերայ, և նա չի հասկանում այդ անհրաժեշտ պիտոյքը որովհետև բացի նիւթական շահից նորա համար ուրիշ շահ չկայ. Մոռացայ յիշել որ Նուխուայ մէջ երկու Հայոց եկեղեցի կայ և մէկն էլ Ռուսաց.

Իսկ աղջկերանց համար ուսումնարան չկայ, որովհետև մեր հայերի խելապատակում պտտվում մի միտք է տիրապետում—„թէ աղջիկը ինչ, ուսումն ինչ։

Յոյս ունիմք որ այն նոր տարին անօգուտ չի անցնիլ Նուխեցւոց համար և զարթնելով իրենց մտաւոր թմրութիւնից հոգս կ'քաշեն իրենց որդւոց մտաւորական և բարոյական կրթութեան վերայ լաւ հասկանալով այս խորհրդաւոր խօսքերը թէ՝ այնտեղ է փողը, հարստութիւնը, արժանաւոր պարծանքը, որտեղ կան այս երկու աշխարհաշէն բարերարները—**ուսումը և դաստիարակութիւնը.**

1873. 5 յունվար Մ. Գ. Աւշանեան

Ց. Գ. Լսում ենք որ մի քանի երիտասարդներ գիտաւորութիւն ունին այստեղ մի ընթերցարան բաց անելու. ցանկանում ենք կատարեալ յաջողութիւն այդ նոր շարժումին.

ՆԱՄԱԿ ՂԶԼԱՐԻՑ

Ղզլարի բնակիչները. Ինչպէս խոստացել էի անցեալ նամակումս, այս անգամ կամենում եմ խօսել Ղզլարի միւս բնակիչների մասին, որոնք են՝

1. **Վրացիք.** Սորա թւով մօտ երեսուն տուն են, բայց ինչպէս երևում է, առաջ աւելի շատ են եղել. Քաղաքից փոքր ինչ հեռի կայ մի գերեզմանատուն, որ Հայերը անուանում են „վրացի

թւին կրկին ազատ քաղաքներ (Freistadt) դարձան, իրանց սեփական կառավարութիւն (ծերակոյտ) յօրինելով.

Այս երկու քաղաքները Վիէննայի ժողովից յետոյ (1814-15) ազատ դառնալով, վերանորոգած Հաննօվէրի թագաւորութեան կողմից ստիպվեցան միմեանց մէջ եղած առևտրական կապը կտրելու. Հաննօվէրի թոյլ կառավարութիւնը իր համար վնաս համարելով եթէ Համբուրգի և Բրէմէնի պէս երկու մեծ քաղաքներ, ձեռք ձեռքին տուած, ընդհանուր օգուտներին ձգտէին, աշխատում էր նոցա առևտրական պայմաններին վնասել, արգելք դնելով նոցա միմեանց հետ անմիջական յարաբերութիւններին. Եւ յիրաւի Համբուրգը, Գերմանիայի ամենամեծ առևտրական նաւահանգիստը, ներքին գաւառների հետ միայն մի երկաթուղով էր կապած—Բէրլինի հետ. Հարաւի հետ յարաբերութիւնները շատ դժուար էին.

Այդ է պատճառը որ Համբուրգի առևտրի մեծ մասը կենդրոնացած էր միայն Գերմանիայի արևելքումը և կամ արտաքին էր, այսինքն վաճառքը հանվում էին այլ երկիրներ՝ Ֆրանսիա, Անգլիա, և այլն և կամ ապրանքը Հնդկաստանից գալով, ուղարկվում էր Ամերիկա և փոխադարձաբար.

Միայն 1866 թւից, երբ Հաննօվէրի թագաւորութիւնը Պրուսիայի մի գաւառ դարձաւ, Համբուրգցիքը կարողացան իրանց վաղուց ցանկացած գիտաւորութիւնը իրագործել,—մի երկաթուղու կամուրջ շինել Էլբա գետի վերայ և նաւահանգիստը անմիջապէս կապել երկաթուղով արևմտեան և հարաւային Գերմանիայի և Ֆրանսիայի հետ. Այժմ ահա այս կամուրջը վերջացրած է և երկաթուղին բացվեցաւ.

Որքան օգտաւէտ էր Համբուրգին այս նոր ճանապարհը, արդէն նորանից կարելի է եզրակացնել, որ քաղաքը այս վերջին տարիները, աչքի առաջ ունենալով կամուրջի շինուելը, անչափ ընդարձակուեցաւ. Եթէ մի մարդ այս քաղաքը քանի մի տարից առաջ տեսած լինէր, հազիւ կարող է այժմ նորան կրկին ճանաչել՝ նոր երկաթուղին առիթ տուեց նոր նաւահանգստի շինութեանը, որ անմիջապէս երկաթուղու կայարաններին է հասնում իր նոր շքեղ և մարդաշատ ծովեզրով (quai). Այս շինութիւնները այն յարմարութիւն ունեն, որ նաւով հասած վաճառքը կարող են իսկոյն երկաթուղու կառքերի մէջ դարսվել, որի համար ծառայում են քսանից աւելի բարձրացնող շոգեմեքենաներ. փոխադարձաբար, երկաթուղով բերած ապրանքը նոյն հեշտութեամբ նոյն մեքենաների միջոցով դարսվում է նաւերի մէջ.

Նոյն ինքը քաղաքն էլ բոլորովին այլ կերպարանք ստացաւ՝ նոր արձակ փողոցներ, գեղեցիկ տներով տարածվում են քաղաքի կենդրոնից, Բօրզայից մինչև նոր երկաթուղու կայարանը և նաւահանգիստը.

Բնակիչները այլ ոգի ստացան՝ պահպանելով իրանց առաջվայ գովելի բնաւորութիւնները՝ աշխատասիրութիւնը և հիւրասիրութիւնը, նոքա կարծես աւելի ուրախ սրտով են աշխատում, յուսալով աւելի շահ և օգուտներ.

Հազիւ թէ կայ ամբողջ Գերմանիայումը Համբուրգի պէս հարուստ քաղաք. Նորա թատրոնները անցած դարուց Լէսսինգի ժամանակից սկսած, ունեցել են միշտ մի առանձին հեղինակութիւն. Նկարչութիւնն էլ Համբուրգի մէջ սկսում է կատարելագործվել նոր հիմնված մուզէումի շնորհով. Գիտութիւնները և գրականութիւնն ես իրանց ներկայացուցիչներ ունեն այդ առևտրական քաղաքումը. Բանաստեղծներից, որոնցով պարծենում է Համբուրգը, բաւական է եթէ յիշեմ ժամանակակից վիպասան Թէոդոր Ստորմին (Theodor Storm), որի գեղեցիկ բանաստեղծութիւնները և վէպերը ամենայն համակրութեան արժանի են. Յիշենք և պ. Ադոլֆ Ստրոդմաննին (Adolf Strodtmann) որ յայտնի է իր աշխատասիրած Հէյնէի և Գօդֆրիդ Կինկէլի կենսագրութիւններով և նմանապէս անգլիական և դանիական լեզուից աջող թարգմանութիւններով.

Հասարակական և մտաւոր ազատութեան հետևանքն էր, որ Համբուրգի մէջ չը կայ տարբերութիւն քրիստոնեաների և հրէաների մէջ՝ ամէնքը վայելում են հաւասար ազատութիւններ և իրաւունքներ.

Համբուրգ. հոկտ. 1872 Անդրէաս Արծրունի

Գէորգ I, Անգլիայի թագաւորը, մի միլիօն թալէր (ռուբլ) վճարելով Շվէդիային, առաւ Բրէմէն քաղաքը և դարձրեց Հաննօվէրի թագաւորական տան (ցեղի) սեփականութիւն. Վերջապէս Նապօլէօն I-ը, իր նուաճումների ժամանակ, միաւորեց Բրէմէն և Համբուրգ քաղաքները Ֆրանսիային.

հանգստարան" այդ տեղ գտնվում է և մի եկեղեցի։ Մի այլ եկեղեցի, որ գտնվում է համարեա քաղաքի կենդրոնում, մինչև այժմ էլ Հայերի մէջ կոչվում է „Վրացի Աստուածածին", թէև ժամասացութիւնը թէ այստեղ և թէ առաջինում ռուսերէն է լինում։ Վրացիքը միմեանց մէջ խօսում են իւրեանց մայրենի լեզուով։ Պարապում են բաւ մեծի մասին այգեգործութեամբ։ Աւելի բազմաթիւ են Նոքա Ղզլարի շրջակայքում, այդպէս Սասօփլա (երևի սօփէլի-գիւղ-բառից է առաջացած) գիւղում մօտ վաթսուն տուն, Սարափանում (Շօլկով) նոյնպէս մօտ վաթսուն տուն։ Ինչ է եղել գոցա գաղթականութեան պատճառը մի այնպիսի ժամանակ, երբ Վրաստանը ունէր քաղաքական կենդրոն, յայտնի չէ ինձ, բայց կարելի է կարծել, որ նոքա, ինչպէս և վրաստանցի Հայերը, գաղթել են այն ժամանակ, երբ Թիֆլիզը կամ այլ վրաց քաղաքները ենթարկվում էին Պարսից աւերմունքներին։

2 Լեկզիք։ Սոքա առաջին անգամ ոտք դրին Ղզլար Ռուսաց և Լեկզիների երկարատև պատերազմների ժամանակ։ 1831 թ. Նոյեմբերի 10-ին, երբ Ղզլարի անհոգ բնակիչները աղօթք էին անում եկեղեցում, և երկար խաղաղութեան ընտելացած լինելով, կամ բոլորովին անպատրաստ էին Նոցա զէնքերը կամ ժանգոտած կախուած էին պատերից, յանկարծ յարձակուեցան Լեկզիների մի մեծ խումբ Ղօզի Մօլլայի (Շամիլի նախորդի) առաջնորդութեամբ և մեծ արիւնհեղութիւն ու յափշտակութիւն գործեցին քաղաքի մէջ, մինչև որ բնակիչները կարողացան թափուել Ղզլարի հողապատ ամրոցը (Սանգար)։ Այդ աղէտալութիւնից յետոյ թէպէտ Նոքա հեռացան, բայց ոչ բոլորովին. դեռ երկար տարիներ Նոքա շրջում էին քաղաքում իբրև ամենահամարձակ աւազակներ։ Կար այնպիսի ժամանակ, երբ արևը մայր մտնելուց յետոյ այլ ևս անկարելի էր լինում փողոց դուրս գալ, առանց վտանգի ենթարկուելու։ Այգիների սըչապքներում ամէն մի խիտ ծառից արիւն էր կաթում, Բայց վերջապէս Նոքա էլ ճնշուեցին։ Այժմ 10—15 տարի է, որ անհետացել է Նոցա կատաղութիւնը, և սկսել է, կարելի է ասել, Նոցա երրորդ շրջանը խաղաղ կենցաղավարութիւնը։ Նոքա կազմում են քաղաքի մի առանձին փոքրիկ արուարձանը և պարապում են գինեգործութեամբ, դարբնութեամբ և այլն։ Ամառը, չը դիմանալով քաղաքի անտանելի շոգին, Նոքա հեռանում են իւրեանց հայրենիքը Դաղստանի հով լեռները, իսկ աշնանը դարձեալ վերադառնում են։ Միմեանց մէջ խօսում են լեկզերէն, որ շատ կոշտ և կոկորդախօս հնչիւններ ունի, իսկ քաղաքի միւս բնակիչների հետ Նոցա յարաբերութիւնը Թաթարերէն լեզուով է լինում։ Դաւանում են մահմեդական կրօնը։

3. Նոգայներ։ Նոգայի միջակ հասակը, դեղին գոյնը, երկարացրած աչքերը, տափակ և փոքր ինչ դէպի վեր ցցուած քիթը, լայն, տափակ, բոլորովին անմազ կամ շատ փոքրամազ երեսը յայտնի ցոյց են տալիս Նորա մօնղոլական ծագումը։ Նոքա բաւական բազմաթիւ են և այնքան մերձ յարաբերութիւններ ունեն քաղաքի միւս բնակիչների հետ, որ նոքա համարեա ամէնքն էլ քաջ ծանօթ են Նոգայերէն լեզուին մեծից մինչև փոքր։ Այս հանգամանքը շատ օտարոտի է երևում, եթէ աչքի առաջ ունենանք այն, որ Նոգայները այս տեղի բնիկների մի այնպիսի ստորին դասն են կազմում, որ համարեա բոլորովին զուրկ է սեփականութենից, բացի մի անշուք և կեղտոտ թաղից, որ կոչվում է Նաման աուլ (վառ թաղ), բայց Նոցա այդպիսի մեծ ազդեցութիւնը բնիկների լեզուի վերայ բացատրվում է նորանով, որ Նոքա կազմում են համարեա միակ ծառաները բոլոր քաղաքում. 10—12 տարեկան հասակում երեխան բերվում է քաղաք անյայն ծառայութիւն սովորելու։ Նա սկզբում ստանում է միայն իւր օրական հացը, իսկ այնուհետև տարեկան հինգ մանէթից սկսած տարէց տարի աւելանում է Նորա ռոճիկը։ Հասակաւորները պարապում են այգիներում մշակութիւն անելով։ Նոցա վարձատրութեան մասին ես խօսել եմ իմ առաջին նամակներում։ Թէ որքան նշանակութիւն ունի Նոցա տնտեսական գրութեան մէջ Ղզլարի այգեգործութիւնը, կարելի է տեսնել հետևեալ համեմատութիւնից. մշակը՝ որ տարուայ ամբողջ ձմեռնային կէսը տանը ծառայելով բաւականանում է 15 ռուբլով չի համաձայնում ամբողջ տարին 60 ռուբլով ծառայել։ Այսքանս քաղաքբնակ Նոգայների մասին. դառնանք այժմ դէպի դաշտաբնակները։

Դաշտաբնակ Նոգայները ներկայացնում են Թափառական ժողովրդի մի կատարեալ տիպ։ Նոքա ունեն գիւղեր, որոնք կոչվում են Աուլ, իսկ աւուլ մեծերը—իւրթ. աւելի մեծ մասը Թափառական կեանք են վարում։ Նոցա շարժական տները, որոնք ունեն բոլոր ձև գմբէթանման ծածկված և պատած են լինում թաղիքով կամ փսիաթով (рогожа), կոչվում են օթաղ։ Երբեմն էլ պատահում են փոքրիկ և կոնաձև տներ, որոնք կոչվում են գոշ։ Այդ շարժական տներով անընդհատ շրջում են Նոքա Ղզլարի շրջակայքի ընդարձակ աւազուտների վերայ արածելով իւրեանց բազմաթիւ եզների, ձիերի և մանաւանդ ոչխարների հօտերը։ Երբ մի տեղի խոտը սպառվում է, Նոքա բարձում են իւրեանց օթաղները սայլերի վերայ և գնում են մի այլ տեղ։ Այն միջոցին, երբ տղամարդիկը պարապած են անասնապահութեամբ կանայք իւրեանց կովերի և խաշների առատ կաթից շինում են իւղ, պանիր, մածուն և այլն։ Ամառները Նոքա բերում են այդ քաղաք և վաճառում են փողոցից փողոց ման ածելով։

Այս Նկարագրութիւնից կարելի է արդէն գուշակել, որ Նոգայները կանգնած են զարգացման շատ ստոր աստիճանի վերայ։ Կրօնով մահմեդական են Նոքա։ Լեզուները Թաթարերէն, փոքր ինչ աղաւաղած և փափուկ հնչիւնները աւելի կոշտացրած (գեալ-գէլ, գափու-գափ և այլն)։

Ես կը կամենայի մի քանի խօսք ասել և Ղզլարի շրջակայ միւս ազգերի մասին, բայց նամակս աստէն երկարանում է, ուստի միւս անգամ։

1873 թ. յունվարի 21. Մի Ղզլարցի

P. S. Հեռագրական գծի թելը Վլադիկավկազից հասել է մինչև Ղզլար. դեկտեմբերի 17-ից սկսուեց Նորա գործադրութիւնը։

Այստեղ շատ բաւական թանգութիւն է. հացի գրվանքէն արժէ 5 կոպէկ, որ համարեա երկնապատիկ աւելի թանգ է, քան թէ սովորական գինը։

Մ. Ղ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունվարի 8-ին Մօսկվայի Օկրուժնոյ դատարանում քննվեցաւ Սերգէյ Նէչայեվի գործը և դատաստանը ճանաչելով Նրան մեղաւոր ուսանող Իվանովի սպանելում, վճռեց զրկելով Նրան իր բոլոր իրաւունքներից, դատապարտել հանքերի ծանր աշխատանքին 20 տարով, և այնուհետև բնակեցնել Սիբիրում։

⁂

Նորին Բարձրութիւն Կովկասի փոխարքայն, յունվարի 9-ին հասաւ Ս. Պետերբուրգ։

⁂

Իշխան Դոնդուկով Արղութեանի կտակի մասին մենք լսեցինք հետևեալը։ Երևանի Թեմական հոգևոր կոնսիստորիայի հրամանաւ, Ալէքսանդրապօլցի արժ. Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանցը մի խնդիրք է ներկայացրել տեղւոյս դատաստանական պալատին Սենատ (կասացիոննի սուդ) ուղարկելու։ Այդ խնդրքի մէջ հայոց հոգևոր կառավարութիւնը, իբրև երրորդ անձն, խնդրում է Սենատին պատուիրել պալատին վերաքննել գործը, որովհետև պալատի վճռով հոգևոր կառավարութեան և ազգային ուսումնարանի շահը ստնակոխ է լինում։ Հանգուցեալի կտակակատարների փաստաբան պ. Նաֆուլեանցը իր կողմից առանձին խնդիրք է ներկայացնում, որի մէջ հաստատում է, թէ պալատի վճիռը միանգամայն ապօրինի է, և խնդրում է Սենատին ոչնչացնել այդ վճիռը։

⁂

Մեզ հաղորդում են, թէ Նաւթի գործը վերջացած լինելով, հերթ հասել է աղահանքերի ծախելուն։ Մեր անհոգութենից դէպի բաժանորդական (ակցիօնէր) ընկերութիւնները, երևի և այդ հարուստ հանքերը օտարների ձեռք կընկնեն։

⁂

Դարձեալ մի ապացոյց մեր անհոգութեան։ Լսում ենք, որ ջրանցք շինելու և գազի լուսաւորութիւնը մտցնելու համար կազմված մասնաժողովը վճռել է փակել իր նիստերը, որովհետև ընկերութեան հիմնադիրները հրաժարվել են իւրաքանչիւր 50 ռուբլի օժանդակութիւն տալ, սկզբնական հետազօտութիւններ անելու, որոց մասին մենք խօսած էինք „Մշակի" № 2-ում. Լսում ենք, որ եւրոպական բանկիրներ աշխատում են այդ գործի մասին։

⁂

Փետրվարի 1-ին, Թիֆլիսի մեծ թատրոնում հայ-դրամատիկական խումբը ներկայացրեց պ. Սունդուկեանցի „Պէպօ" պիէսան։

⁂

Մասնաւոր անձերից տեղեկանում ենք, որ անցեալ տարուայ համար Թիֆլիսի փոխադարձ կրէդիտի ընկերութիւնը դիվիդէնտ կը տայ իր անդամներին, մօտաւորապէս 14%

Ահա 1 ներքին 5% (հինգ տոկոսաբեր) փոխառութեան յունվարի 2-ին արած տիրաժի հանդած սերիաները՝

00,177	04,404	09,490	12,049	16,746
02,152	04,683	09,594	12,405	17,518
02,201	04,936	09,825	13,866	17,639
02,429	05,539	09,851	13,923	17,799
02,635	05,839	10,459	14,943	17,825
02,678	06,268	10,769	14,445	18,100
03,059	07,266	11,064	15,160	18,957
03,350	07,568	11,842	15,520	19,479
03,676	08,509	11,901	15,570	19,683
03,721	09,371	11,932	15,796	19,896

⁂

Մեզ գրում են Դարբանդից, որ յունվար ամսի 9-ին այդ քաղաքում հայերէն լեզվով ներկայացրին՝ „Դալալ Ղազօ", „Գիշերուայ սարբը խէր է" և նմանապէս բժիշկ Յակոբ Գալստեանից թարգմանած „Ազ և ֆէրար"։ Այս վերջինը, ոճի պարզութեամբ և նրբութեամբ աւելի զօր եկաւ հասարակութեանը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Նապօլէօն III-ի կայսրութեան արտաքին գործոց վերջին նախարար Հերցօգ-Գրամօնը, սրանից մի քանի շաբաթ առաջ, տուեց մի քանի բացատրութիւններ սեպտեմբերի 4-ի անցքերի առիթով կազմված առանձին „Քննողական մասնաժողովում"։ Այդ բացատրութիւնները բոլորովին հակառակ էր նախագահ պ. Թիէրի տուած ցուցմունքներին։ Նախ քան խօսել այն բանի վերայ թէ ինչ էր խօսել պ. Թիէրը, կամ ինչ պատասխանեց Գրամօնը, մենք յարմար ենք համարում տեղեկացնել մեր ընթերցողներին, որ այդ „Քննողական" ասուած մասնաժողովը, կազմվեցաւ սրանից շատ առաջ, Ազգային ժողովի կամքով՝ որտեղ մանրամասնօրէն քննում են, և տեղեկութիւն հաւաքում, Նապօլէօն III-ի Սէդանի մօտ գերի ընկնելու օրից սկսած, բոլոր դէպքերի մասին, որոնք պատահեցան Ֆրանսիայում։ Ինչպէս կայսրութիւնը ընկաւ, ինչ յեղափոխական շարժմունքներից առաջացաւ այդ անկումը, ովքեր կազմեցին ժամանակաւոր ազգային պաշտպանութեան կառավարութիւնը, ինչ չափով կարողացան կրագործել իրանց վերայ առած լուծը, որքան բարեխիղճ էին իրանց գործակատարութեանց մէջ, թէ տնտեսական ծախսերի թէ պատերազմական շարժողութեանց, և թէ ամրոցների պաշտպանութեան և անձնատուր լինելու դէպքերում։ Այդ „Քննողական մասնաժողովում" զանազան ցուցմունքներ են առնելու զանազան մարդկերանցից, որոնք մասնակից էին պատերազմի ժամանակ ազգի հասարակական գործքերում, ու ծանօթ են իրերի վիճակին։ Վերջին ժամանակում, մասնաժողովի նախագահ գրաֆ-Դարիւն, հանրապետութեան նախագահ պ. Թիէրին էլ հրաւիրեց տեղեկութիւններ տալու։ Նախագահ Թիէրը „Քննողական" ժողովի մէջ խօսեց այն բանի վերայ, որ իրան շատ լաւ յայտնի է, թէ այն ժամանակ, երբ Նապօլէօն III-ը հրատարակեց պատերազմ Պրուսիային, Ֆրանսիական կառավարութիւնը շատ լաւ գիտէր, որ Եւրոպայի մէջ ոչ մի դաշնակից չէր կարող գտնի։ Նա իր խօսքերը հիմնում էր այն փաստի վերայ, թէ օգնութիւն կարելի էր սպասել միմիայն Աւստրիայից, որը դեռ ևս չէր մոռացել 1866 թուի Պրուսացոց հետ ունեցած պատերազմի դառը հետևանքները։ Պատերազմից մի փոքր առաջ, երբ կայսրութեան արտաքին գործոց նախարար Հերցօգ-Գրամօնը դեռ ևս այդ պաշտօնը չէր վարում, այլ նոր էր վերադարձել Աւստրիայից, որտեղ մինչև այդ օրը Ֆրանսիայ դեսպան էր, և եկել էր որ նախարարութեան նոր պաշտօնը ընդունի։ Մի օր ինքը Թիէրը խօսակցութիւն ունեցաւ այդ նոր նախարար Հերցօգ Գրամօնի հետ, թէ արդեօք, եթէ Ֆրանսիան պատերազմ հրատարակի, կարո՞ղ է յուսալ, որ Աւստրիան զէնքով օգնական կը լինի։ Պ. Թիէրի խօսքով, Գրամօնը պատասխանեց թէ—Աւստրիացիք ամենևին չեն մոռանում Պրուսացիներից վրէժ առնելու, Նրանք ցանկանում են խաղաղ դրութեան մէջ մնալ, որ 1866 թուի պատերազմի անյաջողութիւններից առաջացած վէրքերը բժշկեն։ Նրանք առանց էն էլ շատ ցաւեր ունեն հոգալու։ „Ուրեմն, Ֆրանսիան Աւստրիայի հետ դաշնակցութեան յոյս չը պէտք է ունենայ, հարցնում է Թիէրը։ „Ի հարկէ որ չը պէտք է ունենայ" պատասխանում է Գրամօնը։ „Բայց պատերազմը առանց դաշնակցի ամենամեծ անբախտութիւն կարող է առաջացնի" շարունակում է Թիէրը։ „Ոչ թէ անբախտութիւն, այլ բոլորովին կորստեան կը մատնէ" վերջացնում է սորանով իր խօսակցութիւնը Գրամօնը։

Պ. Թիէրի „Քննողական մասնաժողովի" մէջ տուած այդ ցուցմունքներից յետոյ հարցրին իրան պ. Գրամօնին։ Գրամօնը ընդհակառակը բոլորովին ուրիշ բաներ ցոյց տուեց։ Նրա խօսքով Աւստրիան խոստացել էր դաշնակցութիւն, բայց վերջը իր խոստմունքից յետկանգնեց, և բարձի թող արաւ Ֆրանսիային։ Այս բացատրութիւնը Գրամօնի կողմից, ամբողջ քաղաքական աշխարհում մեծ դղրդիւն հանեց։ Բոլոր լրագիրները ապեցին Գրամօնի ցուցմունքները, և պահանջեցին, որ նա իր խօսքերը հաստատի փաստերով։ Ոչ թէ միայն Ֆրանսիայի, այլ նոյնպէս ամենամեծ ուշադրութիւն արաւ այդ բանը Վիէննայի և Բեռլինի մէջ։ Եւրոպայի բոլոր օրագրութիւնը միաբերան գալիս էին այն եզրակացութեան, թէ Գրամօնը անշուշտ պէտք է օրինաւոր փաստերով հաստատի, եթէ կամենում է, որ իր խօսքերը սուտ չը համարեն։ Գրամօնը առ ժամանակ լռեց, իսկ բոլոր քաղաքական թերթերի մէջ բացուեցաւ սաստիկ պօլէմիկայ, սկսեցին զանազան մեկնութիւններ տալ։ Ոմանք հաւանական էին համարում, իսկ մի քանիսը սուտ բոլորովին։ Վերջապէս, այդ պօլեմիկայի առիթով՝ Գրամօնը ուղղեց նամակ „Քննողական մասնաժողովի" նախագահ գրաֆ-Դարիւին, որի մէջ սկսեց բացատրել իր ցուցմունքները։

Նորա խօսքով, նա չէ կամենում պօլէմիկայ սկսել իր հակառակորդների հետ, նա միայն իրողութիւններ պէտք է յայտնի որ բանը պարզուի, որովհետև էդ բանը նրանից պահանջում են շատ ծանրաբարոյ և խոհեմ մարդիկ, որոնք կամենում են էդ խճճուած գործքի մէջ մի ճշմարտութիւն գտնել։ Նա չէ ասել երբէք, ու հիմի էլ չէ ասում, որ Աւստրիան ցանկանում էր 1870 թուի պատերազմը, կամ գրգռում էր սկսելու։ Ընդհակառակը, էդ պատերազմի հրատարակութեան լուրը շատ անախորժ ընծայ էր Նրա համար։ Գրամօնը միշտ լուռ է կացել այն հարցի մասին՝ թէ ինչ յարաբերութիւնների մէջ էին գտնվում Աւստրիայի հետ մինչև պատերազմի սկսիլը. նա էլի լուռ կը մնայ այդ մասին քանի որ քաղաքականութեան հարկը պահանջում է...Բայց կրկնում է, որ Աւստրիան խոստացել էր իր մասնակցութիւնը 1870 թուի պատերազմի մէջ։ Էս իրողութիւն է, որ նա կարող է ապացուցել, թէ կուզ ինչ էլ որ ասի, կամ ուրիշներին ասել տայ պ. Թիէրը, 1870 թուին, յուլիսի 23-ին այսինքն, պատերազմը հրատարակելուց մի քանի օր յետոյ, այցելութիւն է անում Գրամօնին Փարիզի մէջ գտնված Աւստրիացոց դեսպանը, և յանձնում է Նրան իր կառավարութեան կողմից երկու ծանուցագիր, որ նրանց պատճէնը վերցնի։ Մի ծանուցագրի մէջը որը պէտք է հրատարակվէր 'ի լսողութիւն ամենքին, գրած է եղել,—որ Աւստրիան պահպանում է չէզօքութիւն, բայց այնպիսի չէզօքութիւն, որ նա ազատ է, հարկը պա-